ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N << ԵՔ-ԳՀԾՁԲ-19/94-2

ք. Երևան

27 մայիսի 2019թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետի Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՊԵՑՑՈ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ս. Սարգսյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **3206000** (երեք միլիոն երկու հարյուր վեց հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**Կատարող**
Երևանի քաղաքապետարան ք. Երևան, Արգիշտի փող. 1 Կենտրոնական գանձապետարան Հ/Հ 900052473635 ՀՎՀՀ 02593108	«ՊԵՑՑՈ» ՍՊԸ Հասցե՝ ՀՀ, ք. Ստեփանավան, Գ. Նժդեհի 37 ՀՎՀՀ՝ 06955741 «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ Հ/Հ՝ 16033017291900
Է. Կիրակոսյան ---------- (ստորագրություն) Կ.Տ.	Ս. Սարգսյան ---------- (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 1
27. 05. 2019թ. կնքված ԵՔ-ԳՀԾՁԲ-19/94-2
գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/Հ	ԳՄԱ կոդ (CPV)	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
4	79951110/468	**էքսկուրսիաների կազմակերպում** 01.07.2019թ.-31.08.2019թ. Նախատեսվում է վարչական շրջանի սոցիալապես անապահով ընտանիքների համար էքսկուրսիաների կազմակերպում դեպի Սևանա լիճ: էքսկուրսիայի մասնակիցներին պարտադիր պետք է ուղեկցի շահող կազմակերպության կողմից տրամադրված բժիշկ՝ մասնագիտական համապատասխան որակավորում ունեցող և բաժնի աշխատակիցները : Նախատեսվում է իրականացնել 2 էքսկուրսիա հուլիս և օգոստոս ամիսներին, օրերը նախապես համաձայնեցնելով վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի հետ: Յուրաքանչյուր էքսկուրսիայի ժամանակ ավտոբուսը պետք է լինի Սևանա լճում առավոտյան ժամը 11-ին և հետ վերադարձը ժամը 18.00-ին: էքսկուրսիան կազմակերպել Սևանա լճի ափամերձ հանգստյան գոտում , որը ունենա տաղավարներ նախատեսված 30ից 35 մասնակիցների համար հանգիստը հարմարավետ անցկացնելու և լողալու համար նախատեսված համապատասխան ափ: Յուրաքանչյուր էքսկուրսիայի մասնակիցների թիվը մոտ 30-35 մասնակից: տրանսպորտային միջոցը 40ից 45 տեղանոց բարձրակարգ ավտոբուս՝վարորդով: Մասնակիցներին պետք է ապահովվել՝ սնունդով, ջրեղենով և քաղցրավենիքով /առանց կրեմի/: Գրիլ հավ 20հատ պատրաստի վիճակում ընդհանուր քաշը կազմի 25կգ, լավաշ 20կգ, 40հատ քաբաբ պատրաստված տավարի մսից պատրաստի վիճակում նվազագույնը 200գր, յուրաքանչյուրը փաթաթված լավաշի մեջ դրված մեկանգամյա օգտագործման տոպրակի մեջ, 60հատ խմելու ջուր յուրաքանչյուրը 0,5լ հայկական արտադրության:	դրամ	444000	1	Արա Սարգսյան 5	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 01.07.2019թ.-31.08.2019թ.

		1լ բնական հյութ ռուսական կամ եվրոպական արտադրության 40տուփ, 120հատ մեկանգամյա օգտագործման համար նախատեսված բաժակներ բարջարեղեն -պոմիդոր 10կգ, վարունգ 10կգ հայկական : Պանիր 3կգ բարձրակարգ հայկական արտադրության քաղցրավենիք - հայկական արտադրության առանց կրեմի շոկոլադապատ վաֆլիներ -7կգ, պեչենիներ տարբեր տեսակի 7կգ					
5	79951110/469	**Խաղող օրհնեքի տոն** 20.08.2019թ. Սոցիալապես անապահով մոտ 110շահառուների համար հյուրասիրության կազմակերպում վարչական շրջանում գործող բարեգործական ճաշարանում: Ճաշասրահը պետք է զարդարվի Խաղող օրհնեքի տոնին համապատասխան: Սրահի տոնական ձևավորման համար օգտագործվում են տնտեսական ապրանքներ, փուչիկներ, մրգային և ծաղկային կոմպոզիցիաներ, գունավոր ժապավեններ, տոնական մոմեր: Տոնական ճաշկերույթի ժամանակ օգտագործվում են մեկանգամյա օգտագործման տարբեր չափսերի ափսեներ, բաժակներ և սննդի համար նախատեսված մեկանգամյա օգտագործման պոլիէթիլենային տոպրակներ: Մատուցվում է տավարի մսից խաշլամա յուրաքանչյուրին՝ 200գր. /մատաղ/, քյուֆթա՝ յուրաքանչյուրին՝ 200գր. կարագով յուրաքանչյուրին՝ 50գր, սոխեռածով ՝ /5կգ սոխ, 5լ ձեթ/, պատրաստված հաճարի փլավ, յուրաքանչյուրին 200գրպատրաստի վիճակում.: Ճաշկերույթին ներկա է լինում եկեղեցուց հրավիրված քահանան, որը օրհնում է մատաղը: Սեղանները ձևավորվում են 2 գույնի սփռոցներով, տոնական զարդարված մոմերով/20հատ գունավոր մոմեր 17ից -20սմ երկարությամբ: Սեղաններին դրվում են ժապավեններով գեղեցիկ ձևավորված գինու շշեր՝ յուրաքանչյուր 4հոգուն 1շիշ 750գր./դառը /տեղական արտադրության /, պանիր յուրաքանչյուրին 50գր. մրգեղեն՝ մասնավորապես տոնին համապատասխան սեղաններին գերիշխողը հանդիսանում է կարմիր քիշմիշ տեսակի խաղողը, դեղձ, խնձոր, յուրաքանչյուր շահառուին ամեն մրգից 100-ական գրամ,, բանջարեղեն՝ վարունգ, պոմիդոր, յուրաքանչյուրին 1հատ միջին չափսի , խմորեղեն /2տեսակի/, նաև գաթա յուրաքանչյուրից 100-ական գր, շոկոլադե կոնֆետներ յուրաքանչյուր շահառուին 200գր, հանքային ջուր 4հոգուն 1շիշ 1լ տարողությամբ, գազավորված լիմոնադ 4հոգուն 1շիշ 1լ տարողությամբ և բնական հյութեր յուրաքանչյուրին 1տուփ 200մլ. տարողությամբ, յուրաքանչյուրին 1հատ բոքոնիկ հաց, 1լավաշ: Ունենք նաև տնային խնամքի շահառուներ, որոնց համար նախատեսված սնունդը տարվում է տուն: :Շահող	դրամ	745000	1	Արա Սարգսյան 5	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 20.08.2019թ.

		կազմակերպության կողմից տրամադրված տրանսպորտային միջոցով /մարդատար ավտոմեքենա՝վարորդով 4-5 տեղանոց/ Միջոցառումը ուղեկցվում է 30-40 րոպե տևողությամբ մշակութային մասով, որի ընթացքում լինում է երգի կենդանի կատարում, ինչպես նաև գեղարվեստական մաս: Կիրառվում է ձայնային տեխնիկա:					
6	79951110/470	**Տարեցների օր** 01.10.2019թ. Սոցիալապես անապահով մոտ 110շահառուների համար հյուրասիրության կազմակերպում վարչական շրջանում գործող բարեգործական ճաշարանում: Ճաշասրահը պետք է զարդարվի տոնականորեն: Սրահի տոնական ձևավորման համար օգտագործվում են տնտեսական ապրանքներ, փուչիկներ, ծաղկային կոմպոզիցիաներ, գունավոր ժապավեններ, տոնական մոմեր/20հատ գունավոր մոմ 17ից-20սմ: Տոնական ճաշկերույթի ժամանակ օգտագործվում են մեկանգամյա օգտագործման տարբեր չափսերի ափսեներ, բաժակներ և սննդի համար նախատեսված մեկանգամյա օգտագործման պոլիէթիլենային տոպրակներ: Մատուցվում է տավարի մսից խաշլամա յուրաքանչյուրին՝ 200գր. /մատաղ/, քյուֆթա՝ յուրաքանչյուրին՝ 200գր. կարագով յուրաքանչյուրին՝ 50գր, սոխեռածով ՝ /5կգ սոխ, 5լ ձեթ/, պատրաստված հաճարի փլավ, յուրաքանչյուրին 300գրպատրաստի վիճակում/.: Ճաշկերույթին ներկա է լինում եկեղեցուց հրավիրված քահանան, որը օրհնում է մատաղը: Սեղանները ձևավորվում են 2 գույնի սփռոցներով և ծաղկային կոմպոզիցիաներով: Սեղաններին դրվում են ժապավեններով գեղեցիկ ձևավորված գինու շշեր՝ յուրաքանչյուր 4հոգուն 1շիշ 750գր /կիսաքաղցր տեղական արտադրության/ պանիր յուրաքանչյուրին 50գր. ,մրգեղեն /խաղող, դեղձ, սալոր, տանձ, խնձոր/՝ յուրաքանչյուր շահառուին ամեն մրգից 100-ական գրամ, բանջարեղեն՝ վարունգ, պոմիդոր, յուրաքանչյուրին 1հատ միջին չափսի, խմորեղեն /2տեսակի, առանց կրեմի/, նաև գաթա, յուրաքանչյուրից 100-ական գր, շոկոլադե կոնֆետներ՝ յուրաքանչյուր շահառուին 200գր., հանքային ջուր 4հոգուն 1շիշ 1լ տարողությամբ, գազավորված լիմոնադ 4հոգուն 1շիշ 1լ տարողությամբ և բնական հյութեր յուրաքանչյուրին 1տուփ 200մլ. տարողությամբ, հաց յուրաքանչյուրին 1հատ բոքոնիկ, յուրաքանչյուրին 1լավաշ: Ունենք նաև տնային խնամքի շահառուներ, որոնց համար նախատեսված սնունդը տարվում է տուն: :Շահող կազմակերպության կողմից տրամադրված տրանսպորտային միջոցով /մարդատար ավտոմեքենա՝վարորդով 4-5 տեղանոց/	դրամ	739000	1	Արա Սարգսյան 5	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 01.10.2019թ.

7	79951110/471	**Հաշմանդամների միջազգային օր** 01.12.2019թ. Կազմակերպել միջոցառում վարչական շրջանի հաշմանդամ երեխաներ ունեցող սոցիալապես անապահով 40 ընտանիքների համար:/Միջոցառման վայրը հատուկ հարմարեցված լինի հաշմանդամ երեխաների տեղաշարժման անցկացման համար: Միջոցառման մասնակիցներին հատուկ հաշմանդամներին տեղափոխող տրանսպորտի միջոցով /միկրոավտոբուս/տեղափոխել միջոցառման վայր և ավարտից հետո տեղափոխել իրենց բնակության վայրերը: Միջոցառման տևողությունը 1ուկեսից-2ժամ մշակույթային մասով օգտագործվի ձայնային տեխնիկա լինի կենդանի կատարումներ, խաղավարներ, մուլտֆիլմի հերոսներ և ծաղրածուներ: Միջոցառման ընթացքում լինի հյուրասիրություն քաղցրավենիք և բնական հյութեր: Հաշմանդամ երեխաներին տրամադրել նվերներ ըստ տարիքային համապատասխանության և ըստ հաշմանդամության ունակությունների/գրենական պիտույքներ հավաքածու՝ գունավոր մատիտներ, նկարչական ալբոմներ գունավոր կավիճներ, ջրաներկ, ծեփամածուկ,և ուսցողական խաղերի հավաքածուներ: /նախապես խորհրդակցելով բաժնի աշխատակիցների հետ /	դրամ	544000	1	Արա Սարգսյան 5	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 01.12.2019թ.
8	79951110/472	**Ամանոր** 25.12.2019թ. Սոցիալապես անապահով մոտ 110 շահառուների համար հյուրասիրության կազմակերպում վարչական շրջանում գործող բարեգործական ճաշարանում: Ճաշասրահը պետք է զարդարվի Ամանորին և Սուրբ Ծննդյան տոնին համապատասխան: Տոնական ձևավորման համար օգտագործվում են տնտեսական ապրանքներ, փայլեր, փուչիկներ, արհեստական փաթիլներ, գունավոր ժապավեններ, տոնական մոմեր, արհեստական տոնածառ զարդարված խաղալիքներով: Տոնական ճաշկերույթի ժամանակ օգտագործվում են մեկանգամյա օգտագործման տարբեր չափսերի ափսեներ, բաժակներ և սննդի համար նախատեսված մեկանգամյա օգտագործման պոլիէթիլենային տոպրակներ: Մատուցվում է տավարի մսից խաշլամա ՝ յուրաքանչյուր շահառուին 200գր. քյուֆթա՝ յուրաքանչյուր շահառուին՝ 200գր. կարագով յուրաքանչյուրին՝ 50գր. , հաճարի փլավ յուրաքանչյուրին 300գր. պատրաստված սոխեռածով //5կգ սոխ 5լ. ձեթ/: Սեղանները ձևավորվում են 2 գույնի սփռոցներով, արհեստական տոնածառի ճյուղերով և փոքր խաղալիքով տոնական զարդարված ոսկեգույն մոմերով20հատ 17ից 20սմ/ : Սեղաններին դրվում է գեղեցիկ	դրամ	734000	1	Արա Սարգսյան 5	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2019թ.

		ձևավորված գինու շշեր, 4 հուգուն 1շիշ 750մլ տարողությամբ /կիսաքաղցր տեղական արտադրության /., պանիր յուրաքանչյուրին՝ 50գ, , մրգեղեն /խնձոր, բանան, նարինջ/՝ յուրաքանչյուրին 1-ական հատ, խմորեղեն առանց կրեմի /Յտեսակի/ յուրաքանչյուրից 100-ական գր., շոկոլադե կոնֆետներ՝ յուրաքանչյուրին 200գր., հանքային ջուր 4հուգուն 1շիշ /1լ տարողությամբ/, , գազավորված լիմոնադ 4հուգուն 1շիշ /1լ տարողությամբ/ և բնական հյութեր՝ յուրաքանչյուրին 200մլ 1տուփ, հաց՝ յուրաքանչյուրին 1հատ բոքոնիկ, 1 հատ, լավաշ՝ յուրաքանչյուրին 1հատ: Ունենք նաև տնային խնամքի շահառուներ, որոնց համար նախատեսված սնունդը տարվում է տուն: :Շահող կազմակերպության կողմից տրամադրված տրանսպորտային միջոցով /մարդատար ավտոմեքենա՝վարորդով 4-5 տեղանոց/ Միջոցառումը ուղեկցվում է 30-40 որպե տևողությամբ մշակութային մասով: Ներկա է լինում Ձմեռ պապն ու Ձյունանուշիկը: Միջոցառման մշակութային մասը կկազմակերպել Ամանորին տոնին համահունչ: Պետք է կիրառվի ձայնային տեխնիկա:					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02593108
Հ/Հ 900052473635

Հ. Կիրակոսյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

Կ ա տ ա ր ո ղ

«ՊԵՑՑՈ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Ստեփանավան, Գ. Նժդեհի 37
ՀՎՀՀ՝ 06955741
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 16033017291900

Ս. Սարգսյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
27.05.2019թ. կնքված ԵՔ-ԳՀԾՁԲ-19/94-2
գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության			ՀՀ դրամ											
հրավերով նախատեսված չ/հ	գնումների պլանով նախ. ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*											
				մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
4-8-րդ	79951110	մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ						1189000	1189000	1189000	3206000	3206000	3206000	3206000
	Ընդամենը							1189000	1189000	1189000	3206000	3206000	3206000	3206000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
Ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02593108
Հ/Հ 900052473635

Է. Կիրակոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Կատարող
«ՊԵՑՑՈ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Ստեփանավան, Գ. Նժդեհի 37
ՀՎՀՀ՝ 06955741
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 16033017291900

Ս. Սարգսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 9
« ԵՔ-ԳՀԾՁԲ-19/94-2» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան « 27 » մայիսի 2019 թ.

«ՊԵՑՑՈ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ս. Սարգսյանի /ID՝ 002268050, տրված՝ 31.03.2014թ, 053-ի կողմից/ կողմից, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերության), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ *_ԵՔ-ԳՀԾՁԲ-19/94* ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի /այսուհետ՝ Պահանջագիր/ ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ է Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«ՊԵՑՑՈ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Ստեփանավան, Գ. Նժդեհի 37
ՀՎՀՀ՝ 06955741
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 16033017291900

Ս. Սարգսյան _____
(ստորագրություն)

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ**

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն «ՊԵՑՑՈ» ՍՊԸ

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ

6. Վճարողի հաշվի համարը՝ Հ/Հ 16033017291900

7. Վճարողի ՀՎՀՀ՝ 06955741

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ Երևանի քաղաքապետարան

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝02593108

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Կենտրոնական գանձապետարան

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900015211429

14.Գումարը (թվերով և բառերով)՝ **320600** / երեք հարյուր քսան հազար վեց հարյուր /

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ, AMD

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կատարման ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ « ԵՔ-ԳՀԾՁԲ-19/94-2»

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները	21.ա. Վճարողի ստորագրությունները
/_____/	/_____/
/_____/	/_____/
22.բ. Կ.Տ.	21.բ. Կ.Տ

24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____ /ստորագրություն/
24.բ. Կ.Տ.	23.բ. Կ.Տ.
24.գ "___" ___ 20___ թ.	23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.